ՑՈՒՑՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վարչութիւն հոգևոր Դեմարանի Մայր Աթոռոյ ծանուցանէ, ի գիտութիւն ամենեցուն յետագայս.

1. Ի Դպրոցական դասարանս Դեմարանիս ընկալեալ լինին թէ ուսեալքն ի թեմական և ծխական եկեղեցական դպրոցս և թէ պատրաստեալքն առանին կրթութեամբ, իսկ յառաջին լսարան՝ աւարտողք զընթացս ուսման թեմական Դպրոցաց։

2. Ցանկացողք ի մտանել յաշակերտութիւն Դեմարանիս մատուցանեն զինդիր յանուն Ամենապատիւ Տէր Տեղակալի ց25 Օգոստոսի, առաջի առնելով ընդ նմին զվկայագիրս ծննդեան, պատուաստման ծաղկի և ուսման այնր դասարանի թեմական կամ ծխական եկեղ. Դպրոցի, ուստի խնդրատուն իցէ։

3. ՅԳ-րդ դասարան մտանեն պատանիք 14—16 ամեայք, ըստ այսմ Համեմատութեան և ի յաջորդ դասարանս։

4. Աշակերտք ընկալեալ լինին ի դասարանս ըստ հարցաքննութեան։ Վասն մտանելոյ յԳ-րդ դասարան պահանջի անթերի գիտութիւն դասընթացից երկդասեան եկեղեցական ծխական Դպրոցաց. իսկ վասն մտանելոյ ի միւս դասարանս—պատշաճ նոցին ուսումն ըստ ծրագրոյ, հաստատելոյ ի պէտս թեմական Դպրոցաց։

5. Ցանկացողք մտանելոյ յառաջին լսարան հարցաքննին՝ 1. յընդարձակ եկեղեցական պատմութեան, 2. յընդարձակ Քրիստոնէական վարդա-

պետութեան եկեղեցւոյ Հայոց, 3· ի ծանօթութեան Աւետարանացն Ղուկասու, Յովհաննու և Գործոց Առաքելոց, 4, ի լեզուս Հայոց, Ռուսաց և ի Ֆրանսիականին։

6· Ընկալեալքն ի հարցաքննելոց յաշակերտութիւն Ն՛եմարանիս կանխաւ մատուցանեն ի գրաւ 250 ռուբլիս, եթէ եկեալեն ի Կովկասեան կողմանց· իսկ ի հեռաւոր և յարտասահման վիճակաց եկեալքն՝ 175 ռուբլիս· որպէս զի հատուցի նոցա այդ գումար ի ծախս վերադարձի ի հայրենիս ևս և ի գին կորուսեալ և վատնեալ գրոց և այլոց իրեղինաց· ըստ այսմ վարին և աշակերտք Ն՛եմարանիս, որք ցարդ չեն մատուցեալ զայդ գումար։

7· Բաց ի ձրիավարժից ընկալեալ լինին ի Ն՛եմարանն նաև թոշակաւորք։ Իւրաքանչիւր թոշակաւոր վճարէ ի տարին երկու հարիւր ռուբլիս, յերկուս նուագս՝ ի Սեպտեմբեր և Յունվար ամիսս։

8· Թոշակաւոր աշակերտք Ն՛եմարանի, որոց չև ևս է հատուցեալ զթոշակ անցելոյ ամի, պարտին մատուցանել զայնս ի վերադարձի իւրեանց, որպէս և վասն առաջիկայ ուսումն· կիսամեկի։

9· Եթէ թոշակաւոր ոք ելցէ կամ արձակիցի ի Ն՛եմարանէ մինչև ի ցէ բոլորեալ կիսամեկին վճարելոյ, թոշակ նորա ոչ դարձուցի յետս։

Տեսուչ Ն՛եմարանի՝ ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ։

Երևանի Թեմական Դպրանոցի Հոգաբարձութիւնը մեզ խնդրում է հրատարակել.

—

«Երևանի Թեմական Դպրանոցը հրաւիրում է կրօնի (ուսումը ս. Գրոց 6), հայերէնի (6), Հայոց պատմութեան և Հայաստանի աշխարհագրութեան (4), Ռուսաց լեզուի (26), Ռուսաց պատմութեան և աշխարհագրութեան (4), Ընդհանուր պատմութեան և Աշխարհագրութեան (13), Բնական պատմութեան և Բնախօսութեան (4), Ֆիզիքայի (2), Մաթեմատիկայի և Տիեզերագրութեան (14), Ֆրանսերէնի (7) և գ. Նախակրթարանի (26) դասերի համար՝ ՆՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ և մի ՎԵՐԱԿԱՑՈՒ. Դասերի գինն 25, 30 և համալսարանականներին 40 բուբլի. վերակացուին՝ 200 ր.»։

(Սինոդի կարգադրութեամբ բոլոր ծառայողների ռոճկից 3% զեղջուում է)։ Ցանկացողները թող բարեհաճեն դիմել Հոգաբարձութեան մինչև Օգոստոսի մէկը, յայտնելով թէ ո՞ր դասերը կամենում են միացնել, ներկայացնելով իրանց ուսման և ծառայութեան վկայականները»։

«Բագուայ Մարդասիրական Ընկերութեան» ընդհանուր ժողովը ներկայ 1893 թ. համար նշանակել է 600 ռ. նպաստ այն անձանց, որոնք կկամենան յընթացս մի տարուայ վերջնական քննութիւն տալ՝ ուսուցչական իրաւունք ձեռք բերելու համար։ Ցանկացողները թող դիմեն Բագու հետևեալ հասցէով.— Въ Совѣтъ Бакинскаго Армянскаго Человѣколюбиваго Общества. Խնդրատուների մէջ խորհուրդը գերադասելու է նոցա, որոնք աւարտած են Թեմական դպրանոցը կամ Գէորգեան ճեմարանը»։

Նախագահ Խորհրդի Բ. ԴՈԼՈՒԽԱՆԵԱՆՑ.

Առենադպիր Ա. ԳԱԼՍՏԵԱՆՑ.